

## Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

**1959 հունվար 5** Մոսկվայում մահացավ խորհրդային ճարտարապետության խոշորագույն գործիչ, ակադեմիկոս Կարո Հալաբյանը: (Ծնվ. 1897թ.-ին):

**փետրվար 23** Երևանում հիմնադրվում է Արաբական Արևելքի երկրների հետ բարեկամության և մշակութային կապի խորհրդային ընկերության հայկական բաժանմունք:

**մարտ 15** Տեղի են ունենում Հայկական ԽՍՀ հինգերորդ գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները:

**ապրիլ 16** ՀԽՍՀ Գերագույն խորհուրդի սեսիան հաստատում է օրենք «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ՀԽՍՀ-ում ժողովրդական կրթության

սիստեմի հետագա

գարգացման մասին»:

**ապրիլ 23** Լենինյան մրցանակ է շնորհվում կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին «Սպարտակ» բալետի համար:

**մայիս 6** Մոսկվայում մահացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանը: (Ծնվ. 1894թ.-ին):

**հուլիս 1** Երևանում կազմակերպվում է դոկումենտալ և խրոնիկալ կինոնկարների հայկական ստուդիա:

**հուլիս 17** ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նախագահության նախագահ Կ. Ե. Վորոշիլովը Հայկական ԽՍՀ-ին հանձնեց Լենինի շքանշան:

**1960 փետրվար 10** Ավարտվեց Ղարադաղ-Ղազախ-Երևան գազամուղի շինարարությունը: Երևանի Լենինի հրապարակում վառվեց գազի ջահը:

**մարտ 1** ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը Մարտիրոս Մարյանին ԽՍՀՄ ժողովրդական նկարչի կոչում շնորհելու մասին:

**հունիս 15** Երևանում բացվում է համայնավար աշխատանքի բրիգադների և հարվածայինների հանրապետական հավաքը:

**սեպտեմբեր 26** Երևանում բացվում է Հայաստանի ուսուցիչների համագումարը:

**սեպտեմբեր 27** Շահագործման է հանձնվում Աթաբեկյանի հիդրոէլեկտրակայան-Աղստաֆա 108 կիլոմետրանոց էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծով: Դրանով ավարտվում է Անդրկովկասի եղբայրական երեք հանրապետությունների էներգասիստեմի միավորումը, որը նախատեսված էր 7-ամյա

**ոյեմբեր 29** Երևանի Շահումյանի անվան պուրակում բացվում է Հայաստանում խորհրդային կարգերի համար զոհվածների հուշարձանը, ուր սկսում է վառվել «Հավերժական կրակը»:

**ոյեմբեր 30** Երևանում բացվում է ՀԽՍՀ հեղափոխության պետական թանգարանը:

**1961 փետրվար 2** Լենինգրադում մահացավ ականավոր հայագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: (Ծնվ. 1887թ.-ին):

**ապրիլ 22** Մարտիրոս Մարյանին շնորհվում է Լենինյան մրցանակ:

**ապրիլ 29** Բացվում է ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսը Երևանում:

**մայիս 6** Տոնվում է Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորման

**օգոստոս 12** ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումը «Սևանա լճի մակարդակը բնական պայմաններին մոտ բարձրության վրա պահպանելու նպատակով

Արփա գետի ջրի մի մասը Սևանա լիճ շուռ տալու միջոցառումների մասին»:

**հոկտեմբեր 12** ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը ՀԽՍՀ Կոտայքի շրջանը Աբովյանի շրջան և Ադինի շրջանը Անիի շրջան վերանվանելու մասին:

**նոյեմբեր 6** Երևանում մահացավ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Հրաչյա Ներսիսյանը: (Ծնվ. 1895թ.-ին):

**նոյեմբեր 12** ՀԽՍՀ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագրով Երևան քաղաքի Ստալինյան շրջանը վերանվանվում է Լենինյան շրջան, իսկ Լենինյանը՝ Օրջոնիկիձեի շրջան:

**1962 մարտ 31** Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի և ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդի որոշումը «Հայկական ԽՍՀ գյուղատնտեսության կառավարումը վերակառուցելու մասին»: Այդ որոշման համաձայն հանրապետության մեջ ստեղծվում է գյուղատնտեսական արտադրության ղեկավարման կոլտնտեսային-սովխոզային 11 տերիտորիալ արտադրական վարչություն:

**մայիս 27** Նշվեց հայ գրերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

**հունիս 25** Կահիրեում մահացավ սիյունաքահայ ականավոր հայագետ Արշակ Ալպոյաճյանը: (Ծնվ. 1879 թ.-ին):

**սեպտեմբեր 20** ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագիրը ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Ավետ Ավետիսյանին ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհելու մասին:

**հոկտեմբեր 12** Սկսվում է արտասահմանյան երկրներում ապրող հայերի նոր ներգախթը խորհրդային Հայաստան:

**նոյեմբեր 9** Շարք է մտնում Կիրովականի արհեստական մետաքսաթելի գործարանը:

**1963 հունվար 12** ՀԽՍՀ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագիրը ՀԽՍՀ-ում վարչատերիտորիալ փոփոխությունների մասին: Համաձայն այդ հրամանագրի՝ միավորվում են Անիի և Արթիկի, Արտաշատի և Վեդու, Դուկասյանի և Ամասիայի, Մարտունու և Կամոյի, Սևանի և Հրազդանի, Սպիտակի և Կիրովականի, Ստեփանավանի և Կալինինոյի շրջանները:

**1963 փետրվար 13** Շարք է մտնում Չարենցավանի (Լուսավան) գործիքաշինական գործարանի կենտրոնական ծուլարանը՝ ամենախոշորը հանրապետության մեջ:

(Շարունակելի)

Հայաստան-Սփյուռք լրատվության միջոցների  
երրորդ համաժողով  
Ծաղկաձոր, 16 սեպտեմբերի 2006 թ.

## Հայաստան-Սփյուռք. արդյունավետ համագործակցության մոռացված գրավականները

*Արմեն Այվազյան*  
*քաղաքական գիտությունների դոկտոր*

Այսօր, երբ տոնում ենք անկախության 15-երրորդ տարեդարձը և երևանում մեկնարկում է Հայաստան-Սփյուռք երրորդ համաժողովը, ճիշտ ժամանակն է մեկ անգամ ևս անկեղծ հայացքով զննահատել Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների ներկա վիճակն ու զարգացման հնարավորությունները:



Ցավով պետք է արձանագրել, որ Հայաստան-Սփյուռք արդյունավետ համագործակցության համար տակավին ստեղծված չեն գաղափարաբանական, կազմակերպչական ու ֆինանսական հիմքերը:

Գաղափարաբանական առումով՝ Հայաստանի կերպարը գլխիվայր շրջված է: Սփյուռքում Հայաստանն այլևս չի դիտվում որպես աշխարհասփյուռ հայության վերջնական շԱՆԳՐՎԱՆ ու ՄԻԱԿ ՅԱՅՐԵՆԻՔ: Հայաստանն ընդունված է դիտել առավելապես որպես «աղետի գոտի», որին պետք է ընդամենը խղճալ ու ներածին չափով ֆինանսապես օժանդակել: Հայրենաբնակ հայության մոտ ևս խաթարվել է հայրենիքի ըմբռնումն ու զգացումը, որ արդյունք է և՛ խորհրդային շրջանում ստացած դաստիարակության, և՛ անկախության նորագույն շրջանում կրած մեծ զրկանքների, անարդարությունների և ապաշնորհ կառավարման, և՛ նույն այդ 15 տարիների ընթացքում թափ առած աղետալի արտագաղթի, բայց նաև՝ հայրենադարձությունն անլուրջ գաղափար համարելու Սփյուռքի

ընդհանուր դիրքորոշման: Մեծաթիվ և բարեկեցիկ Սփյուռք ունենալը նպաստում է շարունակվող արտագաղթին, որովհետև Սփյուռքը, մի կողմից, վառ օրինակ է տալիս հայրենաբնակ հայությանը, թե ինչպես կարելի է բարգավաճել Հայաստանից դուրս, օտար ափերում, մյուս կողմից՝ դյուրացնում է արտասահմանում աշխատանք գտնելու և հարմարվելու գործը: Սփյուռքը նաև հոգեբանական ինքնարդարացում է պարգևում պանդխտության ցուպը բռնած, բայց հայրենասիրության տարրեր ունեցող հայաստանաբնակ հային՝ մատուցելով նրան «այնտեղից հայրենիքին ավելի շատ օգուտ բերելու» ինքնախաբ բանաձևը:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում նման հոգեբանության գերիշխանությունը ի չիք է անում լուրջ առաջընթացի հնարավորությունը: Իրականում՝ Հայաստանը կարոտ է ոչ այնքան ֆինանսական, որքան բարոյահոգեբանական օժանդակության, որը հիմնված կլինի ոչ թե հայրենիքի նկատմամբ խղճահարության, այլ հպարտության ու ակնածանքի զգացմունքների վրա: Որովհետև հայոց հայրենիքը այն չէ միայն, ինչ ներկայումս տեսանելի ու շոշափելի է: Հայոց հայրենիքը պատմություն է, մշակույթ, քաղաքակրթություն, արժանապատվություն և, իհարկե, տարածք՝ իր հող ու ջրով:

Հայրենիքին առավելագույնս օժանդակելու լավագույն ու ամենաճիշտ միջոցը հայրենադարձությունն է: Միթե՞ պատահական էր, օրինակ, այն, որ լիբանանյան վերջին պատերազմի ավարտից և նրանում Իսրայելի կրած անհաջողություններից (շատ վերլուծաբանների գնահատականով՝ պարտությունից) ընդամենը 2-3 օր անց աշխարհի ամենազարգացած երկրներից՝ ԱՄՆ-ից (400 հոգի), Մեծ Բրիտանիայից (145 հոգի) և Կանադայից ընդհանուր առմամբ շուրջ 800 հրեա կազմակերպված ձևով ներգաղթեց Իսրայել: 2000 թ.-ից ի վեր միայն Միացյալ Նահանգներից Իսրայել է ներգաղթել 13,179 հրեա, որոնք կազմում են այդ նույն շրջանում ամբողջ աշխարհից Իսրայել ներգաղթած 224,641 հրեաների ընդամենը 6 տոկոսը: Այսպիսի գործողությունների նպատակներից մեկը՝ իսրայելցիներին իրենց երկրի ապագայի նկատմամբ վստահություն ներշնչելն է: Հիշեցնենք, որ նշված ժամանակաշրջանը համընկնում է 2-րդ Ինտիֆադայի հետ:

Իսկ մե՞նք: Ինչու՞ Հայաստանի պետությունը, ո՛չ էլ սփյուռքահայ կազմակերպությունները գոնե մեկ հատ ման ակցիա չեն կազմակերպել, թեև պատերազմն ավարտվել է 12 տարի առաջ: Չէ՞ որ հայրենադարձվողները կարող են կատարել նույն դերը, ինչ ռազմաճակատներում թարմ զորագնդերինն է, որոնք գալիս են փոխարինելու հոգնած ու հյուժված, թեկուզև ընտիր ջոկատներին:

Խնդիրը ֆինանսական չէ՝ ասֆալտի վերանորոգման համար գտնվել են տասնյակ միլիոնավոր դոլարներ: Խնդիրը նաև սփյուռքահայ զազվածների մեջ հայրենասիրության պակասը չէ՝ այսօր էլ կգտնվեն հարյուրավոր ու հազարավոր սփյուռքահայեր, որոնք հոգևորը կգերադասեն նյութականից, հայրենիքի դառնություններն ու դժվարությունները՝ օտարության խաբուսիկ քաղցրություններից, մայրենի լեզվով զավակներին դաստիարակելը՝ օտարաշունչ կրթությունից, հայության պայքարին մասնակից լինելը՝ սերունդների անխուսափելի ծուլումից: Սփյուռքի ընդհանուր թվաքանակի առումով այսպիսի մարդիկ առայժմ չնչին փոքրամասնություն են, բայց նրանք այնուհանդերձ հազարներ են: Հայրենադարձվելով՝ նրանք կարող են մեծ դեր կատարել Հայաստանում բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելու, ժողովրդագրական ճգնաժամը մեղմելու, սոցիալական արդարության ու հավասար իրավունքների համար ընթացող պայքարին մասնակցելու, հետագա՝ առավել մեծաթիվ հայրենադարձությունների ճանապարհը հարթելու առումով:

Բանն այն է, որ Հայաստանի պետությունը, ինչպես նաև սփյուռքահայության վերնախավը, տարբեր (անձնական մերկանտիլ, հատվածական, կուսակցական և այլ) պատճառներով, մերժում է հայրենադարձության բուն գաղափարը, երբեմն նույնիսկ մտածված ու նպատակասլաց պայքարելով այդ գաղափարի դեմ:

Այսօր սփյուռքահայ կառույցների մեծ մասի օրակարգը որպես գլխավոր նպատակ հռչակում է այսպես կոչված «հայապահպանումը»: Հայաստանում էլ՝ շատերը սփյուռքի գոյության իմաստը տեսնում են հայապահպանության մեջ: Բայց ի՞նչն է հայապահպանման նպատակը. ահա դա արդեն անհայտ է մնում: Արտերկրում հայապահպանումը դարձել է անիմաստ, ինքնանպատակ գաղափար:

Սփյուռքահայության գոյապահպանման, այն է՝ հայապահպանման բուն և վերջնական նպատակը (նաև գլխավոր միջոցը)՝ սեփական հողերի վրա, անկախ պետականության հովանու ներքո վերամիավորվելն է, առայժմ՝ այսօրվա Հայաստանում (այն ամբողջ տարածքում, որը հայկական զինված ուժերի վերահսկողության տակ է), հետագայում՝ նաև պատմական Հայաստանի ազատագրվելիք այլ հատվածներում: Հայապահպանումն իմաստ ունի միայն, եթե այն գալիս է օժանդակելու ազգային խնդիրների իրականացմանը: Պատմական այս ժամանակահատվածում այդ խնդիրներից են Հայաստանի պետության կայացումն ու ամրապնդումը, հայրենադարձությունը («հայահավաքը»), հայոց ոտնահարված ազգային իրավունքների պաշտպանությունը:

Հայապահպանումն ինքնանպատակ դիտելը (ինչպես անում է սփյուռքահայության զգալի մասը) կտրուկ թուլացնում է նույն հայապահպանման կարևորագույն տարրերը: Մասնավորապես, հայերի քաղաքական գիտակցությունը զրկվում է ազգի գոյատևման դաշտն ու այնտեղ ամեն օր ընթացող հայ-թուրք/ադրբեջանական օբյեկտիվ պայքարը տեսնելուց: Դրանով խանգարվում է իրականության ճիշտ ըմբռնումը: Ավելին, օտար միջավայրի ծուլող իրադրության մեջ՝ հայոց լեզվի և մշակույթի թույլ ու թյուր իմացության պայմաններում, հայապահպանման բուն նպատակի անտեսումը զրկում է տարագիր հային այդ նպատակի դիմադրողականությունը ներարկող ընդունակությունից:

Ուրեմն, Հայաստանի և Սփյուռքի կառույցները պարտավոր են լուրջ քարոզչական աշխատանք տանել հայության մեջ՝ վերականգնելու համար զգալիորեն թուլացած հայրենիքի գաղափարն ու զգացումը, ինչպես նաև հայապահպանության բուն նպատակի գիտակցումը: Հայաստան-Սփյուռք հարաբերությունների կառուցման առանցքը պետք է կազմեն հայրենադարձությանը նպաստող աշխատանքները: Մանրամասնությունների մասին ես բավականին գրել եմ, ուստի այստեղ դրանց չեմ անդրադառնում, կարևորը՝ հայրենադարձության անհրաժեշտության անվերապահ և անհապաղ որդեգրումն է հայրենի պետական և սփյուռքահայ կառույցների կողմից, մնացածը՝ տեխնիկական հարցեր են:

Վերջապես պետք է հասկանալ, որ ամենամեծ կապիտալը մարդն է և մարդուժը: Աշխարհաքաղաքական

այս ծանրագույն միջավայրում երեք միլիոն բնակչությամբ Հայաստանը պարզապես չի կարող երկար գոյատևել: Այսօր մի շարք նախկինում ամուրի հայկական գաղթօջախներ, կարելի է ասել, այլևս ապագա չունեն և կամաց-կամաց կամ գուցե արագորեն կազմալուծվելու են, գաղթելով Ամերիկաներ, Ավստրալիաներ ու Ռուսաստաններ: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, Մերձավոր Արևելքի և Թիֆլիսի հայ համայնքները: Հայկական շունչը պահպանած, հայեցի դաստիարակություն ստացած այդ զանգվածներին հենց այնպես կորցնելն անթույլատրելի է:

Նշենք նաև լավատեսություններ շնչող զարգացումները: Վերջին տասնամյակում Հայաստան արդեն իսկ ներգաղթել և ապրում են հազարավոր հայեր, որոնք եկել են սեփական կամքով ու նախաձեռնությամբ: Դա նշանակում է, որ նոր հայրենադարձության գործընթացն սկսվել է, թեպետև այն ընթանում է անհատական մակարդակով: Այնինչ հայերին Հայաստան պետք է հրավիրել պետական մակարդակով, ստեղծելով հնարավոր բոլոր դյուրությունները նրանց համար: Ներգաղթն իր հետ բերում է նաև ուղղակի ներդրում ինչպես կապիտալի, այնպես էլ մասնագիտական առումով: Իսրայելը ինչպե՞ս է ոտքի կանգնել ու զարգացել: Միայն ու միայն ներգաղթի շնորհիվ:

Պետք է ողջունել լիբանանյան վերջին պատերազմի օրերին Հայաստանի վարչապետի և որոշ պաշտոնյաների հայտարարությունները՝ մեր հայրենակիցներին ընդունելու հայրենի պետության պատրաստակամության մասին: Ցավոք սրտի, նրանց ընդունման գործնական մեխանիզմներն տակավին մշակված չեն: Ամենից առավել՝ հայության հայրենադարձությունը Հայաստան, ներառյալ Արցախ՝ ազատագրված տարածքներով հանդերձ, կենսական անհրաժեշտություն է Հայաստանի ազգային անվտանգության համար: Հայրենադարձությունն անհրաժեշտ է նաև ազգային ինքնությունը պահպանել ձգտող սփյուռքահայերին: Այսպիսով՝ ասվածից հետևող եզրակացությունն է՝ ժողովրդագրությունն է որոշում ամեն ինչ:

Կազմակերպչական առումով՝ Խորհրդային Միության փլուզումից հետո ո՛չ Հայաստանում, ո՛չ էլ Սփյուռքում չստեղծվեցին նոր կառույցներ, որոնք

կկարողանային պատշաճորեն գործ ունենալ քանակապես ու որակապես կտրուկ աճած փոխհարաբերությունների հետ:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների կառուցվածքային պատկերն այսպիսին է:

- Իրադրությունը Հայաստանում
- Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն, փոխանակ ընդլայնվելու և անկախ Հայաստանի շահերից բխող ծրագրերով առաջնորդվելու, պարզապես ցրվեց:
- Հայաստան-Սփյուռք հարաբերություններով արտգործնախարարության շրջանակներում զբաղվելու թույլ փորձերը, մասնավորապես, Սփյուռքի հարցերով արտգործնախարարի հատուկ տեղակալի պաշտոնի կարճատև գոյությունը, փաստորեն ձախողվեցին: Այսօրվա վիճակով այդ հարցերով ՀՀ ԱԳՆ-ում զբաղվողների թիվն ու մանդատն ի սկզբանե կանխում են լուրջ աշխատանքների իրականացումը: Բացի այդ, ԱԳՆ-ի գործառույթները բոլորովին տարբեր են՝ դրանք պատկանում են միջպետական երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների ոլորտին: Մինչդեռ խոշոր սփյուռք ունեցող պետությունների շարքում Հայաստանը թերևս միակն է, որը չունի սփյուռքի հարցերով հատուկ նախարարություն կամ զոնե պետական կոմիտե: Մինչդեռ, օրինակ, մարդկային ռեսուրսների պակաս չունեցող Չինաստանում դա ամենամեծ նախարարությունն է: Իսրայելում գործում է Ներգաղթողների կլանման (աբսորբցիայի) անունը կրող նախարարությունը, որն իր երկարամյա գոյության ընթացքում մշակել է բազմաթիվ արդյունավետ մեխանիզմներ: Ռուսաստանն ու Ադրբեջանը վերջերս են ստեղծել իրենց սփյուռքերի հարցերով համապատասխան կոմիտեներ:
- «Հայաստան» հիմնադրամի ներկա կարողություններն այն վերածել են մի կազմակերպության, որը հեռավոր կերպով անգամ չի հիշեցնում այն համահայկական հզոր կառույցը, որն սկզբնապես նպատակադրված էր:
- Հայաստան-Սփյուռք 1-ին և 2-րդ համաժողովները նույնպես չկարողացան պարզակետ մեզ շոշափելի և կոնկրետ արդյունքներ: Ի՞նչպիսի ակնկալիքներ կարելի է ունենալ Հայաստան-Սփյուռք երրորդ համաժողովից, որը երկու օրից բացվելու է Երևանում: Մեր կարծիքով, այս 3-րդ համաժողովի միակ ռեալ

արդյունքը կլինի այն, որ 50 ներդրողներ կստանան սահմանափակ 50 գյուղերի զարգացմանը սատարելու հույժ կարևոր գործը, բայց միթե՞ այդպիսի մասնավոր որոշումներ ընդունելու համար պարտադիր է հրավիրել Հայաստան-Սփյուռք մեծ համաժողովներ, մանավանդ, որ այդ 50 ներդրողներն արդեն գտնվել են ու հայտնի են:

- Իրադրությունն Սփյուռքում
- Արտերկրում ստեղծվեցին նոր կառույցներ՝ Լինսի հիմնադրամը, Միացյալ հայկական ֆոնդը (United Armenian Fund), որոնք խիստ կարևոր աշխատանք են տանում Հայաստանին ֆինանսապես օժանդակելու գործում, սակայն օգնության ծրագրերը ակտիվորեն չեն ներգրավում սփյուռքահայ զանգվածներից Հայաստանի ու հայության կյանքի մեջ:
- Լոբբինգն ինքնին շատ կարևոր և անհրաժեշտ աշխատանք է, բայց քանի դեռ նրանում բացակայում են հենց Հայաստանի հետ կապված կոնկրետ միջոցառումները, լոբբինգը նույնպես չի ներգրավում սփյուռքահայ զանգվածներին: Բացի այդ, լոբբինգը պայքարի կրավորական միջոց է, եթե չի ուղեկցվում այլ ծրագրերով:
- Համասփյուռքյան կազմակերպություն ստեղծելու բոլոր փորձերը ձախողվել են բազմաթիվ պատճառներով (որոնք այստեղ քննարկելն անիմաստ է) և այս փուլում իրատեսական չեն թվում:

Այսպիսով, ցայսօր Սփյուռքի ներգրավումը Հայաստանի կյանքին ընթացել է հին ճանապարհներով՝ 1) օգնության ծրագրեր, 2) լոբբինգ (հիմնականում ԱՄՆ-ում, վերջերս էլ Եվրոպական Միությունում), 3) քաղաքական հովանավորություն առանձին քաղաքական խմբերին Հայաստանում:


Առաջընթաց արձանագրելու համար հայությունն ինքնակազմակերպման շեշտակի աճի կարիք ունի՝ թե՛ հայրենիքում, թե՛ Սփյուռքում, ինչպես նաև այդ երկուսի միջև: Հայաստանը, իր դժվարություններով ու ձախողումներով, բայց նաև կարևոր ձեռքբերումներով, ամենաիրական առանցքն է, շատ առումներով՝ միակը, որի շուրջը կարելի է կառուցել սփյուռքահայ կյանքն ու ինքնությունը:

Կարծում ենք, օգտակար կլինի մտածել արտերկրում այնպիսի նոր կառույցների հիմնադրման մասին, որոնց միակ խնդիրը կլինի հայրենադարձությանն

ամբողջ հնարավոր օժանդակություն ցուցաբերելը՝ ֆինանսական, տեղեկատվական, իրավական, ինչպես նաև գաղափարական առումներով: Այդ նոր կառույցները պետք է անկախ լինեն սփյուռքյան բոլոր մյուս կառույցներից, ինչպես նաև հայկական պետությունից: Հույժ կարևոր է Հայաստանում Սփյուռքի հարցերով նախարարության հիմնումը: Ժամանակն է նաև խոշոր ներդրումներ կատարել հայրենադարձության մեջ, որը կբարձրացնի ազգի ոգին, ինչպես նաև երկրի տնտեսությունը, իսկ համաշխարհային պատմությունից քաջ հայտնի է, որ այս երկուսը սերտորեն փոխկապակցված ոլորտներ են: Ի մի բերենք, Հայաստան-Սփյուռք համագործակցության ճիշտ կազմակերպումը նախատեսում է լուրջ փոփոխություններ հայկական աշխարհի գաղափարաբանական ու կազմակերպչական կյանքում (ներառյալ Հայաստանի օրենսդրական դաշտում)՝ հիմքում ունենալով Հայաստանում վաղ թե ուշ հայության միավորման գաղափարը:

## ՅԻՇԱՏԱԿ

### Բարզեն (Բարիս) Ասրեան (1924 - 2006)



### Յարգանքի խօսք՝ ստեղծում մարած վարպետի մահուան կապակցությամբ

Քառասուն օրերից բաւական երկար է անցել Բարզեն (Բարիս) Ասրեանի մահուանից: Իրանահայ աւագ սերնդին պատկանող վարպետ գծանկարիչ-գրաֆիստը, որը յիսուն տարիների անդուլ ջանքերով յարգւած անուն էր վաստակել թեհրանի տպագրական եւ գովազդային ընկերութիւնների շրջանակում, բայց միշտ մնացել էր ստեղծում՝ առանց ժամանակ ու ձգտում ունենալու գովազդելու իր անունն ու գործը եւ դրանից բացի՝ աշխատանքային ասպարէզը առիթ չէր տւել արծարծելու իրանահայ շրջանակներում, որտեղ եւ մնաց անծանօթ անուն եւ միայն վերջին տարիներում իր մասին մէկ-երկու ակնարկ տպագրւեց օրաթերթիս էջերում: Ծնւել էր 1924 թ. Իրանի հիւսիսային Գիլան նահանգում՝ Ռաշտ քաղաքի շրջակայքում տարածւած Լաշտենշա շրջանում հաստատուած հայ ընտանիքում: Հայեցի կրթութիւնն ստացել է Թաւրիզում եւ թեհրանի հայոց «Դաւթեան» դպրոցում, որը թերի մնաց՝ ազգային դպրոցների

պարտադիր փակման հետեւանքով: Փոքր տարիքից սէր ու ձգտում զգալով գեղեցիկ արւեստների, յատկապէս երաժշտութեան եւ նկարչութեան հանդէպ, ուստի՝ հայոց դպրոցների փակումից յետոյ ստիպւած աշխատանքի անցաւ իր մանկութեան ժամանակի ցուցանակագործ Դուկասեանի արհեստանոցում: Իր բոլոր կարողութիւններն ու գիտելիքները՝ գովազդային նկարչութեան բնագաւառում, ինքնաշխատութեամբ ձեռք բերելով՝ Բարիսը դարձաւ ժամանակի ամենաճանաչուած գծանկարիչներից մէկը, մի ժամանակ, երբ առհասարակ գրաֆիկան աշխատանքային եւութեամբ ու կարելոթեամբ բոլորովին իր ներկայում ձեռք բերած դիրքն ու յարգանքը չունէր Իրանի հասարակութեան մօտ՝ անճանօթութեան պատճառով: Իր աշխատանքները ցուցադրել եւ ընդամենը չորս անգամ խմբական ցուցահանդէսներում, առաջինը՝ 1949 թ.-ին՝ ժամանակին գոյութիւն ունեցող Զայ երիտ. մշակութային միութեան խմբական ցուցահանդէսում, երկրորդ անգամ՝ 1951-52 թականին Թեհանի Խորհրդաիրանական մշակութային կենտրոնում կազմակերպուած խմբական ցուցահանդէսում, 1974 թ.-ին՝ Իրանի գրաֆիստների առաջին ընդհանուր ցուցահանդէսում, որի կատալոգում տպագրեց Բ. Արեանի հանրայայտ «Բեթովէն» գծանկարը, որը իր մնայուն գործերից պէտք է համարել: Վերջին անգամ էլ մասնակցել է 1995 թ.-ին Զ. Ս. «Արարատ» կազմակերպութեան երեցների միութեան կազմակերպած իրանահայ նկարիչների խմբական ցուցահանդէսին: Բարիս Արեանի ոչ-գրաֆիկական աշխատանքներից (իւղաներկով բնանկարներ) 12 նմուշներ կարելի է տեսնել Թեհրանի «Րաֆֆի» օրացոյցի ամսաթերթի վրայ: Իրանի գրաֆիստների արհեստակցական միութեան կազմելուց յետոյ՝ հանգուցեալ Սորթեգա Սոմայեզը ստանձնեց Իրանի ժամանակակից գրաֆիկայի մնայուն գործերի արխիւը կազմել, ուստի եւ՝ ձեռնարկեց, հաւաքեց ու միատեղեց Բարիս Արեանի գծանկարած իրանական ապրանքանիշերի գծանկարներն ու գովազդային նկարների օրիգինալ ու տպագրուած օրինակները: Լինելով Իրանի տպագրական բնագաւառում ժամանակին փնտրուած անձնաւորութիւն՝ իր թաղմանը ընտանիքի անդամներից ու հարազատներից բացի՝ ներկայ եղան մեծ թույլ պարսիկ արւեստագէտ հայրենակիցներ ու նախկին գործընկերներ եւ յարգեցին ստւերում ապրող իրանահայ վարպետին: Բարին (Բարգէն) Արեանը երկարատեւ անբուժելի հիւանդութեան պատճառած տառապանքից ուժասպառ՝ մահացաւ 2006 թ. օգոստոսի 19-ին՝ Թեհրանում:

Ա. 3.

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւանի մէջ լոյս տեսնող «Ազգ» օրաթերթը, ժամանակ մը առաջ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան կամքին հակառակ եւ առանց որեւէ հաւանութեան, փոխանցուեր էր այլ սեփականատիրոջ:

Դժբախտաբար, սխալ այդ կարգադրութիւնը ուղղելու համար տարուած բազմաթիւ աշխատանքները տակաւին չեն յանգած դրական արդիւնքներու:

Չետեւաբար կը ստիպուինք պաշտօնապէս յայտարարել թէ, իր ներկայ վիճակով, «Ազգ» օրաթերթը եւ իր բովանդակութիւնը բացարձակապէս ոչ մէկ առնչութիւն ունին Ռամկավար Ազատական Կուսակցութեան հետ:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԿԱՄՈՒՐՋ ՕՎԿԻԱՆՈՍԻ ՎՐԱՅՈՎ

ՀԼԿԵՄ Կենտկոմի «Որոնում» հանրապետական հեռուստակոմունիկացիոն կենտրոնին իզուր չէր դիմել Սան Ֆրանցիսկոյի բնակիչ, երկրաշարժագետ Ռուբեն Դոնիկյանը, որն աշխատում է երկրաշարժի հետեւանքով ավերված Սպիտակում: Կենտրոնի աշխատակիցները նրան օգնեցին պարզել, թէ ինչ է պատահել նրա հոր հետ. չէ՞ որ վերջերս Սան Ֆրանցիսկոյին նույն դժբախտությունը վիճակվեց: Լավ լուրեր ստացվեցին. ամեն ինչ կարգին է, հայրը ողջ է:

Այս լուրը Յայաստանը եւ ԱՄՆ-ը իրար կապած եզակի ռադիոկոմայուտերային կամրջի օրինակներից մեկն է: Դա հնարավոր է դարձնել միջազգային վթարային սիրողական ռադիոցանցի հետ «Որոնման» համագործակցության շնորհիվ: Իսկ դրանով զբաղվում է «Որոնում» կենտրոնի նոր ստորաբաժանումը՝ վթարային իրավիճակներում օգնություն ցույց տվող ծառայությունը: Այստեղ աշխատում են երիտասարդ աշխատակիցներ Տատյանա Արտյոնովան եւ Վիկտոր Խրեբտովը:

- Սան Ֆրանցիսկոյի երկրաշարժի հաջորդ օրը կենտրոնը հանրապետական հեռուստատեսությամբ եւ ռադիոյով հաղորդեց, որ պատրաստ է օգնություն ցույց տալ հարազատներին ու բարեկամներին որոնելու գործում, տվեց իր հասցեն եւ հեռախոսահամարները,- պատմում է Վիկտորը:

- Անմիջապես սկսեցին զանգահարել ու գալ մարդիկ: Մենք զրանցում ենք բոլոր հարցումները: Մեզ արդեն մի քանի տասնյակ մարդ է դիմել, եւ հարցումների թիվը շարունակում է ավելանալ:

Երեքշաբթի, չորեքշաբթի եւ հինգշաբթի ժամը 19-ին (միջին եվրոպական ժամանակով ժամը 15-ին) հարցումները ռադիոկոմայուտերով հաղորդվում են Արեւմտյան Բեռլին, միջազգային վթարային սիրողական ռադիոցանցի ներկայացուցիչ Ռոբերտ Բրյուսին, իսկ վերջինս արդեն դրանք վերահասցեագրում է Միացիյալ Նահանգներ, այդ ռադիոցանցի տնօրեն Գլեն Բաքստերին: Այնտեղ որոնումները օպերատիվորեն են կատարվում: արդեն հաջորդ երեկո պատասխանները գալիս են: Դրանք, որպես կանոն, դրական են, եւ արդեն 50-ից ավելի այդպիսի պատասխան է եկել: Իսկ եթե որոնվողի հեռախոսը կամ հասցեն հայտնի չեն, ապա որոնումները շարունակվում են:

- Ստանալով պատասխանը, մենք կանչում ենք օգնության դիմած մարդուն եւ նրան հանձնում պատասխանը,- ասում է Տատյանան:

Վերջերս որոնումներին միացավ նաեւ «Սան Ֆրանցիսկո - Մոսկոու տելեպորտ» հեռախոսակոմայուտերային ցանցը: Այնպես որ հիմա որոնումները կատարվում են միանգամից երկու կանալով:

Իսկ ինչպիսի՞ք են առ գործունեության հեռանկարները:

- Հիմա մենք աշխատում ենք ծրարավոր ռադիոկապի օգտագործմանը ինտեգրացված ինֆորմացիոն համակարգի վրա,- ասում է «Որոնման» ղեկավար Գ. Վահանյանը:- Դա նախատեսվում է երկրաշարժի գոտու հետ Երեւանի եւ հանրապետության մյուս ռեգիոնների ծրարավոր կարճալիք թվային կապի ստեղծումը: Կարող ենք հարցում անել արտասահմանյան երկրների կարմիր խաչերին, հարկ եղած դեպքում օգնել ախտորոշիչ կոնսուլտացիաներ անցկացնելու, օպերատիվ կապ հաստատել երկրի տարբեր ռեգիոններում ժամանակավորապես բնակվող հարազատների ու բարեկամների հետ, ինչպես նաեւ արտաքին ու ներքին սփյուռքի հետ: Մենք ունենք նաեւ դյուրակիր ինքնավար ռադիոկոմայուտերներ, որոնք կարելի է օգտագործել ուրիշ կապի բացակայության դեպքում:

Ի դեպ, կենտրոնը կարող է օգնություն ցույց տալ ոչ միայն երկրաշարժի դեպքում, այլեւ ամեն մի տարերային աղետի դեպքում, երբ մարդկանց ճակատագիրը հայտնի չէ: Կենտրոնի հետ կարելի է կապվել 58-80-04, 58-80-06 հեռախոսահամարներով կամ դիմել հետեւյալ հասցեով. 375002, Երեւան, Մոսկովյան փող. #2:

(Արմենյարես)

## Իրաքահայությունը կվերագտնի իր դիմագիծը

Ն. ՊՈՐՈՍՅԱՆ

*«Իրաքահայ գաղութն ամերիկա-իրաքյան պատերազմից ամենաշատը տուժել է տնտեսապես: Ազգային դիմագծի պահպանման հիմնական խոչընդոտն այստեղ հայկական վարժարանների փակվելն է»,- այս կարծիքին է Իրաքի ազգային կենտրոնական վարչության ատենադպիր Պարույր Չակոբյանը:*

Իրաքում 15 հազարից ավելի հայ է ապրում, որոնք հիմնականում բնակվում են Բաղդադում, (ուր շուրջ 10 հազար հայ կա) եւ Բասրա, Մոսուլ, Քերքուկ, Սախո քաղաքներում:

Պ. Չակոբյանը հավաստիացնում է, որ իրաքահայ գաղութը շատ կազմակերպված է, գործում է ժողովրդի կողմից ընտրված ազգային կենտրոնական վարչություն, ունի առաջնորդարան: Միայն Բաղդադում չորս հայկական եկեղեցի է գործում եւ մեկական մյուս քաղաքներում:

Ըստ ատենադպիրի, ցավալին այն է, որ 1974 թվականից, երբ Իրաքում անխտիր բոլոր դպրոցներն օրենքով պետականացվեցին, ի թիվս մյուսների, փակվեցին նաեւ հայկական վարժարանները, որոնցում շուրջ 1300 աշակերտ էր սովորում: Այժմ ընդամենը 250 աշակերտ է մնացել, որոնց շաբաթվա ընթացքում հայերենի երկուական դասաժամ է ուսուցանվում:

«Այդ բացը փորձում է լրացնել առաջնորդարանը՝ կիրակնօրյա դպրոցներ բացելով: Հայեցի կրթության գործին են լծված նաեւ Հայ կրոնավորաց միությունը եւ ուրիշներ», - ներկայացնում է Պարույր Չակոբյանը:

Նրա խոսքերով, տարիների ընթացքում Իրաքի հայ գաղութի զբաղվածության պատկերը եւս փոխվել է: Նախկինում գերակշռում էին բժիշկները, ճարտարապետները, մտավորականները, սակայն քաղաքական-տնտեսական իրավիճակից ելնելով շատերը գաղթել են, եւ այժմ մեծ թիվ են կազմում արհեստավորներն ու վաճառականները:

Հայկական ավանդույթները պահպանելու եւ երիտասարդ սերնդի հայեցի դաստիարակության գործում մեծ ներդրում ունեն մշակութային միջոցառումներով զբաղվող Բաղդադի հայ երիտասարդական միությունը, «Կոմիտաս» երգչախումբը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Իրաքի հայ տիկնանց կազմակերպությունը, բարեգործական եւ այլ ընկերություններ:

Ըստ Պ. Չակոբյանի, «իրաքահայ գաղութը երբեք չի խառնվել Իրաքի քաղաքական կյանքին, եւ Սադամի իշխանության օրոք որեւէ խնդիր մենք չենք ունեցել: Լինելով ամենախնքնաբավ գաղութներից մեկը՝ հիմա, սակայն, մեծ թվով կարիքավորներ ու արտագաղթողներ կան»:



Ամերիկյան ռմբակոծություններից իրաքահայությունն առանձնապես մեծ վնաս չի կրել, բայց տնտեսապես շատ է տուժել: Եթե նախկինում առաջնորդարանը նպաստ ու թոշակ էր տրամադրում 320 կարիքավոր ընտանիքի, ապա պատերազմից հետո նրանց թիվը մի քանի անգամ ավելացել է: Վերջերս պատերազմից տուժած իրաքցի հայերին դրամական օգնություն է փոխանցվել Ափյուռքից:

Ապրելով հիմնականում բարեկեցիկ կյանքով՝ տնտեսական ճգնաժամը նաև հոգեպես է ընկճել հայ համայնքին: Պ.Յակոբյանի կարծիքով՝ ամերիկա-իրաքյան հարաբերություններում կարելու է երկկողմ համաձայնությունների գալն ու քաղաքական պայքարի ճիշտ ուղի ընտրելը:

Ըստ նրա՝ Իրաքը հպարտ երկիր է եւ երկար չի մնա նման ծանր վիճակում, իսկ հայկական գաղութը, ընդունված ու հարգված լինելով տեղացիների կողմից եւ քաջալերվելով Հայաստանից, կկարողանա ոտքի կանգնել ու վերագտնել իր նախկին դիմագիծը:

## Բաղդադի ազգային վարժարանը

### Պարույր ՀԱԿՈՔՅԱՆ

*Բաղդադի առաջին ազգային վարժարանը՝ Ս. Թարգմանչաց դպրոցը, բացվել է 1852 թ., որի առաջին տնօրենը Մանվել Դիլանյանն էր: Նա բաղդադահայությանը հայտնի էր «Մանվել վարժապետ» անունով:*

1870-ական թվականներին հայկական միջավայրը զարգացած էր ու եվրոպական լեզուներ իմանալը անհրաժեշտություն էր դարձել:

Ժամանակի ազգային իշխանությունը դիմեց Պուլիսին, եւ Ներսես պատրիարք Վարժապետյանը Բաղդադ ուղարկեց Միհրան Սվաճյանին՝ որպես Թարգմանչաց վարժարանի ուսուցիչ եւ տնօրեն: Ս. Սվաճյանը մտավոր մեծ կարողությունների տեր էր, գրաբարի, աշխարհաբարի, ֆրանսերենի, թուրքերենի, աշխարհագրության հմուտ մասնագետ: Սվաճյանի օրոք վարժարանը մեծ առաջընթաց ունեցավ եւ առաջին տեղը գրավեց Բաղդադի վարժարանների շարքում:

1901 թ. հիմնադրվեց Չաբեյան օրիորդաց վարժարանը, որի տնօրենը դարձյալ Միհրան Սվաճյանն էր: 1917 թ., երբ բրիտանացիները գրավեցին Բաղդադը, Ս. Թարգմանչաց եւ Չաբեյան վարժարանները միավորվեցին, կրթօջախը դարձավ երկսեռ եւ կոչվեց Թարգմանչաց երկսեռ վարժարան: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայրենիքից տեղահանվածներից Իրաք հասած վասպուրականցի ու պարսկաստանցի հայերի մի մասը 1921 թ. համեստ մի վարժարան հիմնեց:

Ազգային իշխանության հավանությամբ դպրոցը 1936

թվին 10 տարով հանձնվեց ԻՀԲԸ միությանը. այն կոչվեց Սվաճյան վարժարան: 1946-ին, երբ լրացավ պայմանագրի ժամկետը, վարժարանը կրկին հանձնվեց ազգային իշխանությանը: Նույն թվականին էլ Ս. Թարգմանչաց դպրոցն ունեցավ առաջին միջնակարգ դասարանը՝ 6 աշակերտով:

1949-ին Սվաճյան եւ Թարգմանչաց վարժարանները միավորվեցին եւ 4 դասարանների հիման վրա ստեղծեցին նորերը, իսկ դպրոցը կոչվեց Ս. Թարգմանչաց եւ Սվաճյան վարժարան: Ժամանակի ընթացքում աշակերտության թիվն ավելացավ, եւ 1962 թ. հին շենքին կից «Գալուստ Գյուլբենկյան» հաստատության ծախսերով կառուցվեց եռահարկ մի շենք՝ միջնակարգ ու երկրորդական բաժինների համար:

Ազգային վարժարանը, մանկապարտեզից հասնելով երկրորդական դպրոցի աստիճանի, դարձավ Բաղդադի ամենաառաջնակարգ վարժարաններից մեկը՝ 1200 սանով:

1975 թվականին հայապահպանության մեր այդ ամրոցը օրենքով փոխանցվեց պետությանը:

Մեկը մյուսին հաջորդեցին դժվարությունները: Նախ՝ փոխվեցին տնօրինությունը եւ վարչակազմը, այնուհետեւ ծրագրից հանվեցին հայոց լեզվի ու կրոնի դասերը, սակայն Ազգային կենտրոնական վարչության լուրջ ու հետեւողական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ այդ առարկաները դասավանդել շաբաթական երկու ժամ: 1974 թ. վարժարանն ուներ 1200 աշակերտ, այժմ այդ թիվը նվազել ու հասել է 750-ի, որից միայն 250-ն են հայ:

Ծրագրված ձեւով ամեն տարի նորանոր դժվարություններ են ստեղծվում: Հայոց լեզվի ու կրոնի ուսուցիչները մշտական աշխատողներ չեն եւ ստանում են չնչին աշխատավարձ:

Դպրոցի միջնակարգ ու երկրորդական բաժինները վերացվեցին, իսկ աշակերտությունը բաժանվեց ուրիշ վարժարանների միջեւ: Աղջիկները կարող են տեղավորվել «Շարքիա» օրիորդաց վարժարանում եւ իրավունք ունեն շաբաթը երկու անգամ ուսանել հայոց լեզու եւ կրոն:

Ամեն տարի դպրոցի վերանորոգման խնդիրները նույնպես հոգում է տեղի հայությունը, որպեսզի հայ երեխաները կարողանան հաճախել նախկին վարժարանը: Ազգային առաջնորդարանը կազմակերպում եւ հոգում է նրանց տրանսպորտային ծախսերի մեծ մասը:

Ներկայումս, երբ փոփոխության ենթարկվեց երկրի վարչակարգը, պետք է վերակառուցենք մեր դպրոցները, որտեղ պիտի հայեցի դաստիարակություն ստանա մեր նոր սերունդը, եւ այս ուղղությամբ մեծ աշխատանքներ է տանում ազգային իշխանությունը: Անշուշտ, մոտ ապագայում դա կդառնա իրականություն, սակայն այդ գործում մեծ գունձարների կարիք ենք ունենալու: